ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«10» դեկտեմբերի 2014թ

ՀՐԱՄԱՆ
№ 313-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 299-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 821-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 19-րդ կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու հավակնորդ ծառայողների ցուցակում ընդգրկված ծառայողների կողմից սերվերի տվյալների բանկ մուտքի բանալի ստանալու և բնակարանների ընտրության վերջնաժամկետը սահմանելու մասին» N 299-Ա հրամանի 1-ին կետի «դեկտեմբերի 11-ը, ժամը 17:59» բառերը փոխարինել «դեկտեմբերի 18-ը, ժամը 17:59» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կայքում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝ ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆ

«10» 12 2014թ.

Ք. Երևան